ՀՀ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ
ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԱՅԻՆ ՔՆՆՉԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ
ՆՈՅԵՄԲԵՐՅԱՆԻ ՔՆՆՉԱԿԱՆ ԲԱԺԻՆ

N 55/ 602քր./ 438 - 20

<<21>> ապրիլի, 2021թ.

ք. Նոյեմբերյան, Զորավար Անդրանիկի 3
հեռ.՝ /+374/ 266- 2-26-06
E-mail: noyemberyan.qb@mail.ru

Նորայր Սամվելի Գիշյանին

Տավուշի մարզ, Նոյեմբերյան քաղաք,
Շահումյան փողոց, 11-րդ տուն

Հայտնվում է, որ վարույթումս քննվող թիվ 47160220 քրեական գործով 2021 թվականի ապրիլի 21-ին ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերով որոշում է կայացվել քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով որոշումը, դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում, կարող եք բողոքարկել վերադաս դատախազին, իսկ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետներում՝ բողոքը մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, եթե դրա վերաբերյալ պատասխան չեն ստացել, բողոք ներկայացվելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում իրավունք ունեն բողոքարկել վարույթն իրականացնող մարմնի գտնվելու վայրի դատարան:

Ուղարկում եմ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին որոշման պատճենը:

Առդիր՝ որոշման պատճենը <<12>> թերթ:

Նոյեմբերյանի քննչական բաժնի պետի տեղակալ,
արդարադատության երկրորդ դասի խորհրդական Հ. Ա. Բեգլարյան

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

/ քրեական հետապնդումը դադարեցնելու և քրեական գործով վարույթը կարճելու մասին/

<<21>> ապրիլի, 2021թ. Ք. Նոյեմբերյան

ՀՀ քննչական կոմիտեի Նոյեմբերյանի քննչական բաժնի պետի տեղակալ, արդարադատության երկրորդ դասի խորհրդական Հ. Ա. Բեգլարյանս, վերանայելով վարույթումս քննվող թիվ 47160220 քրեական գործի նյութերը.

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

Թիվ 47160220 քրեական գործը 2020 թվականի սեպտեմբերի 14-ին ոստիկանության Նոյեմբերյանի բաժնում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով հարուցվել է այն փաստի առթիվ, որ Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի ,,քաղաքի վարչական տարածքում գտնվող հողամասերի աճուրդների վաճառքի արդյունքները հաստատելու և հողահատկացում կատարելու մասին,, 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 175-Ա որոշման համաձայն Նոյեմբերյան քաղաքի 11-004-0296-0018 ծածկագրով տարածքում գտնվող 0.01978 հա գյուղատնտեսական նշանակության հողամասի աճուրդի վաճառքի հաղթող է ճանաչվել Նոյեմբերյանի նախկին քաղաքապետ Վանուշ Սերյոժայի Ամիրաղյանի դուստրը՝ Արփինե Վանուշի Ամիրաղյանը և 2014 թվականի հուլիսի 23-ին նշված հողամասը սեփականության իրավունքով գրանցվել է վերջինիս անվամբ: Այնուհետև Արփինե Վանուշի Ամիրաղյանի և ,,Ղ-Տելեկոմ,, ՓԲԸ-ի միջև կնքվել է վարձակալության պայմանագիր, որի համաձայն նշված գյուղատնտեսական նշանակության հողատարածքը ամսական 35.000 ՀՀ դրամ վճարով վարձակալությամբ հանձնվել է ,,Ղ-Տելեկոմ,, ՓԲԸ-ին և մինչ օրս ստացել է շուրջ 2.300.000 ՀՀ դրամ վարձավճար:

Նախապատրաստված նյութերով փաստական տվյալներ են ձեռք բերվել այն մասին, որ Նոյեմբերյանի նախկին քաղաքապետ Վանուշ Սերյոժայի Ամիրաղյանը հանդիսանալով պաշտոնատար անձ, անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով, պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով, Նոյեմբերյան համայնքի օրինական շահերին պատճառել է շուրջ 2.300.000 ՀՀ դրամի գույքային վնաս:

Թիվ 47160220 քրեական գործը նախաքննություն կատարելու համար ուղարկվել է Նոյեմբերյանի քննչական բաժին և 2020 թվականի սեպտեմբերի 23-ին քրեական գործը Նոյեմբերյանի քննչական բաժնում ընդունվել է վարույթ և կատարվել նախաքննություն:

Նախաքննության ընթացքում Նոյեմբերյանի համայնքապետարանը ճանաչվել է տուժող, հարցումներ են կատրվել ՀՀ կադաստրի կոմիտե, ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչություն, Նոյեմբերյանի համայնքապետարան, «Մտս Հայաստան» ՓԲԸ, հարցաքննվել է տուժողի ներկայացուցիչ Նորայր Սամվելի Գիշյանը, Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի

աճուրդավար Արտեմ Սամվելի Բուդաղյանը, Նոյեմբերյանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղար Արմինե Ռուբիկի Ամիրաղյանը, Նոյեմբերյանի քաղաքապետարանի գլխավոր մասնագետ Մեխակ Սերյոժայի Ամիրաղյանը, 2014 թվականի հուլիսի 18-ին կայացած աճուրդի մասնակիցներ Տիգրան Ջոնիկի Անանյանը, Արմեն Հենրիկի Ամիրաղյանը, Արտյոմ Ալեքսանդրի Գիշյանը, 2014 թվականին ,,Ղ-Տելեկոմ,, ՓԲԸ-ի լիազորված անձ Սերոբ Շահենի Պետրոսյանը, Նոյեմբերյանի ավագանու անդամ Ռուբիկ Սարգիսի Գիշյանը:

Կատարված նախաքննությամբ պարզվել և հիմնավորվել է, որ Վանուշ Սերյոժայի Ամիրաղյանը 2002-2005 թվականներին, ապա 2008 թվականից մինչև 2016 թվականը ընտրվել և աշխատել է որպես Նոյեմբերյան համայնքի քաղաքապետ, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ, 43-րդ հոդվածների ուժով լիազորված է եղել համայնքի ավագանու որոշմամբ և սահմանած պայմաններով օտարելու կամ օգտագործման տրամադրելու համայնքի սեփականություն հանդիսացող գույքը, առաջարկություն ներկայացնելու համայնքի ավագանուն՝ համայնքի սեփականություն հանդիսացող գույքն օտարելու կամ օգտագործման տրամադրելու մասին, ներկայացնելու համայնքի շահերն այլ անձանց հետ փոխհարաբերություններում, համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերին, հողերի օգտագործման սխեմաներին համապատասխան, համայնքի ավագանու համաձայնությամբ և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օտարելու կամ օգտագործման տրամադրելու համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերը, օրենքով սահմանված կարգով վերահսկողություն իրականացնելու համայնքի վարչական սահմաններում գտնվող հողերի նպատակային օգտագործման, հողօգտագործողների կողմից հողային օրենսդրության պահանջների պահպանման նկատմամբ, օրենքով սահմանված դեպքերում և կարգով կանխարգելելու, կասեցնելու և վերացնելու ապօրինի հողօգտագործումները, իրավասու լինելով իր իրավասության շրջանակում ընդունելու որոշումներ, կազմելու արձանագրություններ և արձակելու կարգադրություններ, հետևաբար մեջբերված լիազորությունների իրականացման հիմքով տեղական ինքնակառավարման մարմնում մշտապես իրականացնելով կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ, հանդիսացել է պաշտոնատար անձ: Վանուշ Ամիրաղյանի դուստրը՝ Արփինե Վանուշի Ամիրաղյանը 2006 թվականին ամուսնացել է Բերդավան բնակավայրի բնակիչ Տիգրան Հայկի Դաղբաշյանի հետ, սկզբնական ժամանակաշրջանում դուստրը բնակվել է Բերդավան բնակավայրում, ապա նրանք ընտանիքով բնակություն են հաստատել Ռուսաստանի Դաշնությունում: 2014 թվականին Նոյեմբերյան համայնքի բնակիչներից քաղաքի գերեզմանատան ներքնամասում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական նշանակության /արոտավայր/ հողամասերից գնելու ցանկություն ունեցողներ են եղել, որի վերաբերյալ դիմել են համայնքապետարան: Նոյեմբերյանի քաղաքապետ Վանուշ Ամիրաղյանը 2014 թվականի հունիսի 2-ին համապատասխան լիազորագիր է տրամադրել քաղաքապետարանի գլխավոր մասնագետ Մեխակ Ամիրաղյանին, ով համայնքապետարանի անունից դիմել է ՀՀ ԿԱ ԱԳԿ Նոյեմբերյանի մասնաճյուղ և նշած տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող գյուղատնտեսական

/արոտավայր/ հողամասից առանձնացված հողամասի համար համայնքային սեփականության վկայական ստանալու նպատակով: 2014 թվականի հունիսի 5-ին 11-004-0296-0018 կադաստրային ծածկագրով 0.01978 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ կատարվել է Նոյեմբերյանի քաղաքային համայնքի իրավունքի պետական գրանցում, տրվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 05062014-11-003 համարի վկայականը: Նշված հողատարածքի նկատմամբ համայնքի իրավունքի պետական գրանցումը ստանալուց հետո քաղաքապետ Վանուշ Ամիրաղյանը համայնքի ավագանուն առաջարկություն է ներկայացրել համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու և օտարվող հողամասերի 1 քմ-ի համար մեկնարկային գներ սահմանելու մասին, 2014 թվականի հունիսի 13-ին Նոյեմբերյանի քաղաքային համայնքի ավագանին այլ հարցերի հետ միասին քննարկել է վերը նշված առաջարկությունը և տվել է իր համաձայնությունը համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերը աճուրդային կարգով օտարելու վերաբերյալ, օտարվող հողամասերի 1 քմ-ի համար մեկնարկային գին է սահմանվել 200 ՀՀ դրամը: 2014 թվականի հունիսի 13-ին Նոյեմբերյանի քաղաքային համայնքի ավագանու նշված նիստի վերաբերյալ կազմվել է թիվ 3 արձանագրությունը և թիվ 20-Ն որոշումը: Այնուհետև քաղաքապետ Վանուշ Ամիրաղյանը ավագանու որոշման քաղվածքը տրամադրել է համայնքապետարանի աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի պետի պաշտոնը զբաղեցնող, աճուրդային հանձնաժողովի նախագահ Արտեմ Սամվելի Բուդաղյանին, վերջինս էլ կազմակերպել է հողամասի աճուրդով վաճառքի գործընթացը: 2014 թվականի հունիսի 17-ին ,,Ղ-Տելեկոմ,, ՓԲԸ-ի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող հողատարածքում բջջային հեռախոսակապի կայան կառուցելու մտադրության մասին դիմում է ներկայացվել Նոյեմբերյան համայնքի ղեկավարին, որով խնդրվել է համաձայնեցնել նախագծային փաստաթղթերը և տալ շինարարության թույլտվություն: Վանուշ Ամիրաղյանը տեղեկանալով ,,Ղ-Տելեկոմ,, ՓԲԸ-ի կողմից համայնքային սեփականություն հանդիսացող նշված հողատարածքում բջջային հեռախոսակապի կայան կառուցելու մտադրության մասին, նպատակ ունենալով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օգտագործման դիմաց ակնկալվող վարձավճարների մուտքագրումն ուղղել ոչ թե համայնքային բյուջե, այլ՝ իր դստեր Արփինե Վանուշի Ամիրաղյանի բարեկեցության բարելավմանը, իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով՝ անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով՝ հետագա տարիներին համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օգտագործման հաշվին Արփինե Ամիրաղյանի համար եկամուտներ ապահովելու նպատակով, չի հրաժարվել հողատարածքը աճուրդով վաճառելու մտադրությունից, որի արդյունքում Արփինի Ամիրաղյանը մասնակցել է 2014 թվականի հուլիսի 18-ին կայացած 11-004-0296-0018 կադաստրային ծածկագրով 0.01978 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի աճուրդ-վաճառքի գործընթացին, կայացած աճուրդ-վաճառքի գործընթացում ձևավորվել է վաճառքի վերջնական գումար՝ 45560 ՀՀ դրամ, հաղթող է ճանաչվել Արփինե Ամիրաղյանը, նույն օրը կազմվել է հողամասի աճուրդով վաճառքի արդյունքների մասին, հողամասը աճուրդով վաճառելու մասին թիվ 4/3 և 4/1 արձանագրությունները: Աճուրդավար Արտեմ Բուդաղյանը աճուրդ-վաճառքը կայանալուց

հետո հաղթող ճանաչված անձի վերաբերյալ կազմված արձանագրությունները ներկայացրել է քաղաքապետ Վանուշ Ամիրաղյանին: 2014 թվականի հուլիսի 18-ին քաղաքապետ Վանուշ Ամիրաղյանը կայացրել է ,,Նոյեմբերյանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 04 նիստի քաղաքի վարչական տարածքում գտնվող հողամասերի աճուրդ-վաճառքի արդյունքները հաստատելու և հողահատկացում կատարելու մասին,, թիվ 175-Ա որոշումը, որով հանձնարարվել է քաղաքապետարանի գլխավոր մասնագետ Մեխակ Ամիրաղյանին աճուրդ-վաճառքում հաղթողին օրենսդրությամբ սահմանված կարգով տրամադրել անհրաժեշտ փաստաթղթերը և քաղաքապետարանի կողմից կնքել հողամասի առքուվաճառքի պայմանագիր: 2014 թվականի հուլիսի 18-ին ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի՝ ի դեմս համայնքի ղեկավար Վանուշ Ամիրաղյանի և Արփինե Ամիրաղյանի միջև ՀՀ ԿԱ անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի աշխատակազմի Նոյեմբերյանի սպասարկման գրասենյակում կնքվել է անշարժ գույքի վաճառքի մասին պայմանագիր: 2014 թվականի հուլիսի 23-ին 11-004-0296-0018 կադաստրային ծածկագրով 0.01978 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նկատմամբ կատարվել է Արփինի Վանուշի Ամիրաղյանի իրավունքի պետական գրանցում, տրվել է անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման թիվ 23072014-11-0027 համարի վկայականը: Արփինե Ամիրաղյանը 2014 թվականի հուլիսի 31-ին ,,Ղ-Տելեկոմ,, ՓԲԸ-ի՝ ի դեմս լիազորված անձ Սերոբ Շահենի Պետրոսյանի հետ կնքել է հողամասը վարձակալության հանձնելու մասին պայմանագիր, որով 11-004-0296-0018 կադաստրային ծածկագրով 0.01978 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը 25 տարի ժամանակով 35.000 ՀՀ դրամ ամսական վարձավճարով հանձնել է ,,Ղ-Տելեկոմ,, ՓԲԸ-ին: Այնուհետև 2015 թվականի մարտի 15-ին ,,Ղ-Տելեկոմ,, ՓԲԸ-ն դիմել է Նոյեմբերյանի քաղաքապետին շինարարության թույլտվություն ստանալու համար, Վանուշ Ամիրաղյանը, առանց 11-004-0296-0018 կադաստրային ծածկագրով 0.01978 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխված լինելու, 2015 թվականի մարտի 20-ին ,,Ղ-Տելեկոմ,, ՓԲԸ-ին թույլատրել է կառուցել դաշտային տիպի հիմնական բջջային կայանի կառուցումը, կառուցման աշխատանքները սկսվել են 2015 թվականի մարտի 20-ին, շինարարության շահագործման փաստագրման ակտը կազմվել է 2015 թվականի հունիսի 20-ին: Արփինե Ամիրաղյանը մինչև 2021 թվականի ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածի համար ստացել ընդհանուր 2.835.000 ՀՀ դրամ վարձավճար, ինչի հետևանքով էական վնաս է պատճառվել Նոյեմբերյան համայնքի իրավունքներին և օրինական շահերին՝ համայնքը զրկվել է իր սեփականությունը հանդիսացող գույքի օգտագործման դիմաց 2.789.440 ՀՀ դրամի չափով եկամուտ ստանալու հնարավորությունից:

Արփինե Վանուշի Ամիրաղյանի կողմից 2014 թվականի հունիսի 1-ից մինչ 2021 թվականի փետրվարի 15-ն ընկած ժամանակահատվածում կատարված սահմանահատումների վերաբերյալ ՀՀ ոստիկանության քրեական ոստիկանության գլխավոր վարչություն կատարված հարցման պատասխանի համաձայն նա Հայաստանի Հանրապետության սահմանը երկար ժամանակով հատել է 2014 թվականի հոկտեմբերի 28-ին, իսկ 2019 թվականի սեպտեմբերի 8-ին թիվ 310 ավիաչվերթով մեկնել է ՀՀ-ից և այլևս ՀՀ չի վերադարձել:

Համաձայն Նոյեմբերյանի համայնքապետարանին կատարված հարցման պատասխանի՝ 11-004-0296-0018 կադաստրային ծածկագրով 0.01978 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության /գործառնական նշանակությունը՝ արոտավայր/ հողամասի գույքահարկը 2014 թվականի հուլիսի 31-ից մինչև 2021 թվականի փետրվարի 26-ը կազմել է ընդհանուրը 921 ՀՀ դրամ/ մեկ ամսվա համար 11,7 ՀՀ դրամ, իսկ մեկ տարվա համար 140 ՀՀ դրամ/: Նույն մակերեսով հողամասի որպես էներգետիկայի, կապի, տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների նշանակության /գործառնական նշանակությունը՝ կապի/ գույքահարկը 2014 թվականի հուլիսի 31-ից մինչև 2021 թվականի փետրվարի 26-ը կազմել է ընդհանուրը 1626 ՀՀ դրամ/ մեկ ամսվա համար 20,1 ՀՀ դրամ, իսկ մեկ տարվա համար 247 ՀՀ դրամ/:

2021 թվականի ապրիլի 1-ին որոշում է կայացվել Վանուշ Սերոժի Ամիրաղյանին ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով մեղադրյալ ներգրավելու մասին, առաջադրված մեղադրանքում վերջինիս իրեն մեղավոր չի ճանաչել, նրա նկատմամբ խափանման միջոց է կիրառվել ստորագրությունը չհեռանալու մասին:

2021 թվականի ապրիլի 9-ին որոշում է կայացվել Վանուշ Սերոժի Ամիրաղյանի գույքի վրա կալանք դնելու մասին:

2021 թվականի ապրիլի 16-ին Վանուշ Ամիրաղյանը դիմում է ներկայացրել Նոյեմբերյանի քննչական բաժին և հայտնել, որ իրեն մեղավոր չի ճանաչում, միջնորդել է իր նկատմամբ հարուցված քրեական գործի վարույթը կարճել՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

Տուժողի՝ Նոյեմբերյան համայնքի ներկայացուցիչը ցուցմունքով հայտնել է, որ 2021 թվականի ապրիլ ամսին ստացված գրության համաձայն տեղեկացել է, որ Արփինե Ամիրաղյանին պատկանող և ,,Ղ-Տելեկոմ,, ՓԲԸ-ի կողմից օգտագործվող հողամասում ՓԲԸ-ն կառուցել է բջջային ալեհավաք կայան, սակայն նշված հողամասը հանդիսանում է գյուղատնտեսական նշանակության հողամաս, հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխված չէ, ուստի համայնքապետարանի կողմից համապատասխան գրություն է ուղարկվել ,,ՄՏՍ-Հայաստան,, ՓԲԸ-ի / Ղ-Տելեկոմ,,/ տնօրենին, որով առաջարկվել է հնարավորինս սեղմ ժամկետում ձեռնարկել միջոցներ հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխման՝ օրենքով սահմանվված կարգին համապատասխանեցնելու ուղղությամբ, տուժողի ներկայացուցիչը ցուցմունքին կից ներկայացրել է նաև նշված գրության պատճենը:

2021 թվականի ապրիլի 21-ին որոշում է կայացվել Վանուշ Սերոժի Ամիրաղյանի գույքը կալանքից ազատելու մասին:

ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում պաշտոնեական լիազորությունները չարաշահելու՝ պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը՝ շահադիտական, անձնական այլ շահագրգռվածությունից կամ խմբային շահերից ելնելով, որն էական վնաս է պատճառել անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին (գույքային վնասի դեպքում՝ հանցագործության

պահին սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափը գերազանցող գումարը կամ դրա արժեքը):

ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 3-րդ մասը սահմանում է, որ պաշտոնատար անձինք համարվում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ իշխանության ներկայացուցչի գործառույթներ իրականացնող անձինք, պետական մարմիններում, տեղական ինքնակառավարման մարմիններում, դրանց կազմակերպություններում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության զինված ուժերում, Հայաստանի Հանրապետության այլ զորքերում և զինվորական միավորումներում մշտապես, ժամանակավորապես կամ առանձին լիազորությամբ կազմակերպական-տնօրինչական, վարչատնտեսական գործառույթներ իրականացնող անձինք:

Քննարկվող հանցակազմի հիմնական անմիջական օբյեկտը հանրային իշխանության համակարգի որևէ օղակի նորմալ գործունեությունն է: Միաժամանակ, քննարկվող հանցակազմն ունի նաև լրացուցիչ օբյեկտ՝ մարդու և քաղաքացու իրավունքներն ու ազատությունները, քաղաքացիների, կազմակերպությունների, պետության գույքային, տնտեսական և այլ շահերը: Պաշտոնեական լիազորությունների չարաշահման օբյեկտիվ կողմն իր մեջ ընդգրկում է երեք պարտադիր հատկանիշ՝

ա) պաշտոնատար անձի կողմից իր պաշտոնեական դիրքը հակառակ ծառայության շահերի օգտագործելը կամ ծառայողական պարտականությունները չկատարելը,

բ) հանրորեն վտանգավոր հետևանքները՝ անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին էական վնաս հասցնելու ձևով,

գ) պատճառական կապն արարքի և հետևանքների միջև:

Պաշտոնեական դիրքի օգտագործումը, կարող է դրսևորվել պաշտոնատար անձի կողմից իրեն վերապահված լիազորությունները հակառակ ծառայության շահերի իրականացնելով: Պաշտոնատար անձի լիազորությունները սահմանվում են համապատասխան իրավական ակտերով: Հետևաբար, որպես պաշտոնեական լիազորությունների օգտագործում՝ պետք է դիտարկել այնպիսի արարքի կատարումը, որը բխում է պաշտոնատար անձի լիազորություններից: Միևնույն ժամանակ, պաշտոնեական լիազորությունների չարաշահման հանցակազմի առկայության համար անհրաժեշտ է, որ այդ լիազորություններն օգտագործվեն հակառակ ծառայության շահերի, այսինքն՝ կատարվող արարքը չպետք է բխի ծառայողական անհրաժեշտությունից: Ընդ որում, որպես ծառայության շահեր պետք է դիտարկել ոչ միայն այն պետական մարմնի, հիմնարկի, կազմակերպության կամ ձեռնարկության շահերը, որտեղ աշխատում է տվյալ պաշտոնատար անձը, այլև առհասարակ հանրային կառավարման համակարգի շահերը: Պաշտոնեական լիազորությունների չարաշահման հանցակազմի օբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ են հանրորեն վտանգավոր հետևանքները: Քննարկվող հանցակազմի դեպքում այդպիսի հետևանք է համարվում անձանց, կազմակերպությունների իրավունքներին ու օրինական շահերին, հասարակության կամ պետության օրինական շահերին պատճառված էական վնասը: Էական վնասը կարող է դրսևորվել ոչ միայն գույքային, այլ նաև ոչ գույքային վնասի ձևով: Այդպիսի վնաս կարող են համարվել մարդուիրավունքների ու ազատությունների ոտնահարումը, իշխանության մարմինների

հեղինակազրկումը, նրանց գործունեության խաթարումը, հասարակական կարգի խախտումը, խոշոր չափերի հափշտակությունների կամ այլ ծանր հանցագործությունների պարտակումը և այլն: Ոչ գույքային վնասի էական լինելը գնահատելիս պետք է հաշվի առնել քաղաքացիներին, հասարակությանը և պետությանը հասցված բարոյական վնասի ծանրությունը, տուժած քաղաքացիների քանակը, ոտնահարված իրավունքների ու ազատությունների կարևորությունը, դրանց ոտնահարման աստիճանը, հիմնարկության, կազմակերպության կամ ձեռնարկության նորմալ գործունեության խաթարման աստիճանը և այլն: Պաշտոնեական լիազորությունների չարաշահման հանցակազմի սուբյեկտիվ կողմը բնութագրվում է մեղքի դիտավորյալ ձևով: Ընդ որում, նշված հանցանքը կարող է կատարվել ինչպես ուղղակի, այնպես էլ անուղղակի դիտավորությամբ: Պաշտոնեական լիազորությունների չարաշահման սուբյեկտիվ կողմի պարտադիր հատկանիշ է հանցագործության շարժառիթը: ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածում որպես այդպիսին նշված են շահադիտական կամ անձնական այլ շահագրգռվածությունը կամ խմբային շահերը: Պաշտոնեական լիազորությունները չարաշահելը՝ շահադիտական շարժառիթից ելնելով, որպես կանոն, դրսևորվում է պաշտոնատար անձի կողմից հանցանքը նյութական օգուտ ստանալու կամ ծախսերից կամ պարտավորություններից խուսափելու համար կատարելով: Անձնական այլ շահագրգռվածությունը կարող է դրսևորվել բազմազան ձևերով: Դրա հիմնական դրսևորումներն են ապօրինի վարքագծի վրա հիմնվող կարիերիզմը, հովանավորչությունը, իրականությունը բարենպաստ լույսի ներքո ներկայացնելու ցանկությունը, փոխադարձ ծառայություն ստանալու, տեղի ունեցած իրավախախտումներն ու հանցագործությունները թաքցնելու ցանկությունը և այլն: Անձնական շահագրգռվածության դրսևորում է նաև ծառայության շահի կեղծ ընկալումը, երբ պաշտոնատար անձն արդարանում է նրանով, որ իր արարքը, իբր, չի հակասում այն կազմակերպության շահերին, որտեղ ինքն աշխատում է, դեռ ավելին, օգտակար է այդ շահերի համար: Բայց, եթե նման դեպքերում, պաշտոնատար անձի արարքը հակասում է առհասարակ հանրային կառավարման համակարգի բնականոն գործունեության շահերին, ապա քննարկվող հանցակազմն առկա է:

Կատարված բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ նախաքննության ընթացքում բավարար ապացույցների համակցություն է ձեռք բերվել այն մասին, որ Նոյեմբերյանի նախկին քաղաքապետ Վանուշ Սերյոժայի Ամիրաղյանը, հանդիսանալով պաշտոնատար անձ, նպատակ ունենալով համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օգտագործման դիմաց ակնկալվող վարձավճարների մուտքագրումն ուղղել ոչ թե համայնքային բյուջե, այլ՝ իր դստեր Արփինե Վանուշի Ամիրաղյանի բարեկեցության բարելավմանը, իր պաշտոնեական դիրքը ծառայության շահերին հակառակ օգտագործելով՝ անձնական այլ շահագրգռվածությունից ելնելով՝ հետագա տարիներին համայնքային սեփականություն հանդիսացող հողամասի օգտագործման հաշվին Արփինե Ամիրաղյանի համար եկամուտներ ապահովելու նպատակով, չի հրաժարվել հողատարածքը աճուրդով վաճառելու մտադրությունից, որի արդյունքում Արփինի Ամիրաղյանը մասնակցել է 2014 թվականի հուլսի 18-ին կայացած աճուրդին և Տավուշի մարզի Նոյեմբերյանի քաղաքապետարանի աճուրդային հանձնաժողովի ,,քաղաքի վարչական տարածքում գտնվող հողամասերի աճուրդների վաճառքի արդյունքները հաստատելու և

հողահատկացում կատարելու մասին,, 2014 թվականի հուլիսի 18-ի թիվ 175-Ա որոշման համաձայն 45560 ՀՀ դրամ գումարով Նոյեմբերյան քաղաքի տարածքում գտնվող 0.01978 հա գյուղատնտեսական նշանակության 11-004-0296-0018 ծածկագրով հողամասի աճուրդի վաճառքի հաղթող է ճանաչվել վերջինս, ապա Վանուշ Ամիրաղյանը 2014 թվականի հուլիսի 18-ին որպես ՀՀ Տավուշի մարզի Նոյեմբերյան համայնքի ղեկավար Արփինե Ամիրաղյանի հետ կնքել է անշարժ գույքի վաճառքի պայմանագիր, որի հիման վրա նշված հողամասը 2014 թվականի հուլիսի 23-ին սեփականության իրավունքով գրանցվել է վերջինիս անվամբ: Արփինե Ամիրաղյանը 2014 թվականի հուլիսի 31-ին ,,Ղ-Տելեկոմ,, ՓԲԸ-ի հետ կնքել է հողամասը վարձակալության հանձնելու մասին պայմանագիր, որով 11-004-0296-0018 կադաստրային ծածկագրով 0.01978 հա մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասը 25 տարի ժամանակով 35.000 ՀՀ դրամ ամսական վարձավճարով հանձնել է ,,Ղ-Տելեկոմ,, ՓԲԸ-ին, այնուհետև նա 2015 թվականի մարտի 20-ին, առանց 11-004-0296-0018 կադաստրային ծածկագրով 0.01978 հա մակերեսով հողամասի գործառնական նշանակությունը փոփոխելու, ,,Ղ-Տելեկոմ,, ՓԲԸ-ին նշված գյուղատնտեսական նշանակության հողամասում տվել է շինարարության կատարման թույլտվություն, որի արդյունքում Արփինե Ամիրաղյանը մինչև 2021 թվականի ապրիլի 1-ն ընկած ժամանակահատվածի համար ստացել ընդհանուր 2.835.000 ՀՀ դրամ վարձավճար, ինչի հետևանքով էական վնաս է պատճառվել Նոյեմբերյան համայնքի իրավունքներին և օրինական շահերին՝ համայնքը զրկվել է իր սեփականությունը հանդիսացող գույքի օգտագործման դիմաց 2.789.440 ՀՀ դրամի չափով եկամուտ ստանալու հնարավորությունից:

Այսպիսով, հաշվի առնելով որոշման մեջ նշված հանգամանքները, անհրաժեշտ է փաստել, որ Վանուշ Սերոժի Ամիրաղյանը, հանդիսանալով պաշտոնատար անձ, իր պաշտոնեական դիրքն օգտագործել է ծառայության շահերին հակառակ, նրա արարքում առկա է ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հանցակազմը:

Նախաքննության ընթացքում, 2021 թվականի ապրիլի 16-ին մեղադրյալ Վանուշ Սերոժի Ամիրաղյանը դիմում է ներկայացրել վարույթն իրականացնող մարմնին և հայտնել, որ իրեն մեղավոր չի ճանաչում, միջնորդել է իր նկատմամբ հարուցված քրեական գործի վարույթը կարճել՝ վաղեմության ժամկետներն անցնելու հիմքով:

ՀՀ քրեական օրենսգրքի 315[2]-րդ հոդվածը պատասխանատվություն է նախատեսում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, ինչպես նաև շենքերի և շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու, կանխարգելելու ուղղությամբ օրենքով սահմանված կարգով միջոցներ չձեռնարկելու՝ պաշտոնատար անձանց կողմից, որոնց վրա իրավական ակտերով դրված է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, շենքերի և շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու պարտականությունը, հողամասերի ինքնակամ զավթումը, շենքերի և շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու միջոցներ դիտավորությամբ չձեռնարկելը, ինչպես նաև հողամասերը ինքնակամ զավթած, ինքնակամ կառույց իրականացնող կամ իրականացրած անձանց նկատմամբ վարչական

իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցները դիտավորությամբ չկիրառել համար:

Քննարկվող հանցակազմի օբյեկտիվ կողմը դրսևորվում է անգործությամբ, պաշտոնատար անձը, ում վրա իրավական ակտերով դրված է պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, շենքերի և շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու պարտականությունը, միջոցներ չի ձեռնարկում հողամասերի ինքնակամ զավթումը, շենքերի և շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու համար կամ էլ հողամասերը ինքնակամ զավթած, ինքնակամ կառույց իրականացնող կամ իրականացրած անձանց նկատմամբ չի կիրառում վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցները: Հանցագործության սուբյեկտիվ կողմը բնութագրվում է ուղղակի դիտավորությամբ, հանցավորը գիտակցում է որ չի կատարում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող հողամասերի ինքնակամ զավթումը, շենքերի և շինությունների ինքնակամ կառուցումը կասեցնելու իր վրա դրված պարտականությունը, հողամասերը ինքնակամ զավթած, ինքնակամ կառույց իրականացնող կամ իրականացրած անձանց նկատմամբ չի կիրառում վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցները:

Նախաքննության ընթացքում որևէ փաստական տվյալ ձեռք չի բերվել, որով կփաստվեր Նոյեմբերյանի համայնքապետ Կարեն Հովիկի Աբազյանի կողմից, ում վրա իրավական ակտերով դրված է ինքնակամ կառույց իրականացնող կամ իրականացրած անձանց նկատմամբ վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսդրությամբ նախատեսված վարչական պատասխանատվության միջոցները դիտավորությամբ չկիրառելը, այլ հիմնավորվել է, որ Կարեն Աբազյանը 2021 թվականի ապրիլի 9-ին Նոյեմբերյանի քննչական բաժնից ստացած գրությամբ է տեղեկացել, որ Արփինե Ամիրաղյանին պատկանող և ,,Ղ-Տելեկոմ,, ՓԲԸ-ի կողմից օգտագործվող հողամասում ՓԲԸ-ն կառուցել է բջջային ալեհավաք կայան, սակայն նշված հողամասը հանդիսանում է գյուղատնտեսական նշանակության հողամաս, հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը փոփոխված չէ, համայնքապետարանի կողմից համապատասխան գրություն է ուղարկվել ,,ՄՏՍ-Հայաստան,, ՓԲԸ-ի / Ղ-Տելեկոմ,,/ տնօրենին, որով առաջարկվել է հնարավորինս սեղմ ժամկետում ձեռնարկել միջոցներ հողամասի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխման՝ օրենքով սահմանվված կարգին համապատասխանեցնելու ուղղությամբ, ուստի վերը նկարագրված պայմաններում համայնքապետ Կարեն Հովիկի Աբազյանի արարքի մեջ բացակայում է ՀՀ քրեական օրենսգրքի 315^{2}-րդ հոդվածով նախատեսված հանցագործության հանցակազմը:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածը սահմանում է հանցագործության տեսակները:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ըստ բնույթի և հանրության համար վտանգավորության աստիճանի՝ հանցագործությունները դասակարգվում են՝ ոչ մեծ ծանրության, միջին ծանրության, ծանր և առանձնապես ծանր հանցագործությունների:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ոչ մեծ ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երկու տարի ժամկետով ազատազրկումը, կամ որոնց համար նախատեսված է ազատազրկման հետ կապ չունեցող պատիժ, ինչպես նաև անզգուշությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում երեք տարի ժամկետով ազատազրկումը:

ՀՀ քրեական օրենսգրքի 19-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ միջին ծանրության հանցագործություններ են համարվում դիտավորությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում հինգ տարի ժամկետով ազատազրկումը, ինչպես նաև անզգուշությամբ կատարված այն արարքները, որոնց համար սույն օրենսգրքով նախատեսված առավելագույն պատիժը չի գերազանցում տասը տարի ժամկետով ազատազրկումը:

ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասը նախատեսում է տուգանք՝ նվազագույն աշխատավարձի երկուհարյուրապատիկից երեքհարյուրապատիկի չափով, կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկել՝ առավելագույնը հինգ տարի ժամկետով, կամ կալանքով՝ երկուսից երեք ամիս ժամկետով, կամ ազատազրկմամբ՝ առավելագույնը չորս տարի ժամկետով:

Նման պայմաններում ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցանքը համարվում է միջին ծանրության:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածը սահմանում է քրեական պատասխանատվությունից ազատելը վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ անձն ազատվում է քրեական պատասխանատվությունից, եթե հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել են հետևյալ ժամկետները.

1) երկու տարի՝ ոչ մեծ ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

2) հինգ տարի՝ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից.

3) տասը տարի՝ ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից.

4) տասնհինգ տարի՝ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վաղեմության ժամկետը հաշվարկվում է հանցանքն ավարտված համարելու օրվանից մինչև դատավճռի օրինական ուժի մեջ մտնելու պահը: Տևող հանցագործության դեպքում վաղեմության ժամկետը հաշվարկվում է արարքը դադարելու, իսկ շարունակվող հանցագործության դեպքում՝ վերջին արարքը կատարելու պահից:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատվում է, եթե մինչև նշված ժամկետներն անցնելն անձը կատարում է միջին ծանրության, ծանր կամ առանձնապես ծանր նոր հանցանք: Այս դեպքում վաղեմության ժամկետի հաշվարկն սկսվում է նոր հանցանքի ավարտված համարելու պահից:

ՀՀ քրեական օրենսգրքի 75-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ վաղեմության ժամկետի ընթացքը կասեցվում է, եթե անձը խուսափում է քննությունից կամ դատից: Այս դեպքում

վաղեմության ընթացքը վերսկսվում է անձին ձերբակալելու կամ մեղայականով նրա ներկայանալու պահից: Ընդ որում, անձը չի կարող քրեական պատասխանատվության ենթարկվել, եթե ոչ մեծ ծանրության կամ միջին ծանրության հանցանքն ավարտված համարելու օրվանից անցել է տասը տարի, իսկ ծանր կամ առանձնապես ծանր հանցանքն ավարտված համարելու օրվանից՝ քսան տարի, և վաղեմության ժամկետի ընթացքն ընդհատված չի եղել նոր հանցագործությամբ:

Թիվ 47160220 քրեական գործով Վանուշ Ամիրաղյանի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործություն կատարելու օրվանից անցել է ավելի քան 5 տարի, Վանուշ Ամիրաղյանը նշված ժամանակահատվածում հանցագործություն չի կատարել, վաղեմության ժամկետի ընթացքի ընդհատում կամ վաղեմության ժամկետի ընթացքի կասեցում չի եղել, այսինքն՝ անցել են վաղեմության ժամկետները:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը սահմանում է. <<քրեական գործ չի կարող հարուցվել և քրեական հետապնդում չի կարող իրականացվել, իսկ հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անցել են վաղեմության ժամկետները>>: Նույն հոդվածի 6-րդ մասի համաձայն. <<սույն հոդվածի առաջին մասի 6-րդ և 13-րդ կետերում նշված հիմքերով գործի վարույթի կարճում և քրեական հետապնդման դադարեցում չի թույլատրվում, եթե դրա դեմ առարկում է մեղադրյալը: Այս դեպքում գործի վարույթը շարունակվում է սովորական կարգով>>:

Վաղեմության ժամկետն անցնելու հետևանքով քրեական պատասխանատվությունից ազատելու վերաբերյալ իր դիրքորոշումն է հայտնել նաև ՀՀ վճռաբեկ դատարանը վերլուծության է ենթարկել Ա. Սաղաթելյանի՝ 2011 թվականի հոկտեմբերի 20-ի թիվ ԳԴ5/0022/01/10 գործով, մասնավորապես. <<...քրեադատավարական օրենքը վաղեմության ժամկետն անցնելու հիմքով քրեական պատասխանատվությունից ազատելու պարտադիր նախապայման է դիտում մեղադրյալի համաձայնությունը, որի բացակայությունը ենթադրում է վարույթի շարունակում ընդհանուր կարգով>>:

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ (...) հարուցված քրեական գործի վարույթը ենթակա է կարճման, եթե անձի արարքի մեջ հանցակազմ առկա չէ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ և 6-րդ կետերով, նույն հոդվածի 2-րդ և 3-րդ մասերով, 55-րդ հոդվածով, 151-րդ, 261-262-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Վանուշ Սերոժի Ամիրաղյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով իրականացված քրեական հետապնդումը դադարեցնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի հիմքով՝ քրեական պատասխանատվության ենթարկվելու վաղեմության ժամկետները անցնելու հիմքով:

2. Վանուշ Սերոժի Ամիրաղյանի նկատմամբ ընտրված ստորագրություն չհեռանալու մասին խափանման միջոցը վերացնել:

3. Կարեն Հովիկի Աբազյանի նկատմամբ ՀՀ քրեական օրենսգրքի 315[2]-րդ հոդվածով քրեական հետապնդում չիրականացնել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի հիմքով՝ վերջինիս արարքի մեջ հանցակազմի բացակայության պատճառաբանությամբ

4. Թիվ 47160220 քրեական գործով վարույթը կարճել:

5. Որոշման պատճենն ուղարկել Վանուշ Սերոժի Ամիրաղյանի, Նորայր Սամվելի Գիշյանին և Կարեն Հովիկի Աբազյանի՝ նրանց պարզաբանել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով որոշումը, դրա պատճենն ստանալու պահից 7 օրվա ընթացքում, կարող են բողոքարկել վերադաս դատախազին: Միաժամանակ, պարզաբանել, որ ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 290-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված ժամկետներում՝ վերադաս դատախազի կողմից բողոքը մերժելու մասին տեղեկություն ստանալու կամ, դրա վերաբերյալ պատասխան չստանալու դեպքում, բողոք ներկայացվելուց հետո մեկ ամսվա ժամկետը լրանալու օրվանից՝ մեկ ամսվա ընթացքում կարող են բողոքարկել դատական կարգով:

6. Որոշման օրինակը, քրեական գործի հետ միասին, ուղարկել ՀՀ Տավուշի մարզի դատախազին՝ կայացված որոշման օրինականությունը ստուգելու համար:

Նոյեմբերյանի քննչական բաժնի պետի տեղակալ
արդարադատության երկրորդ դասի խորհրդական՝ Հ. Ա. Բեգլարյան